


Կարգադրական

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ
ԳՐԱԿԱՆ

ԵՐ

ԱՌԱՋՆՈՐԴ ՀԱՃԱՌԱԿԱՆԱՑ



ԿՐԱՏԱՐԱԿԻՉ

ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ



1892



ՏՊԱԳՐԻՉ

ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ





ՀԱՆՐԱՔԻՏԱԿ

ՀԱՆՐԻՍ هانراكيداق HANRAKIDAGUE

ՀԱՐԱԹԱԿԱՆ مجموعه علوم JOURNAL ARMÉNIEN ENCYCLOPÉDIE

2. ՏԱՐԻ — ՆՈՐ ՇՐՋԱՆ || ԹԻԻ 18 || 3 ՄԱՅԻՍ 1903



Մ Ա Յ Ր Ը

Ո՞վ է ան որ միշտ կ'ելլէ լոյս առտուն՝
Մինչ ամէնքն անուշ խոր քուն կը քաշեն.
Ընտանիքին վրայ կը հսկէ արթուն.
— Տանտիկի՛նն է ան՝ բարի, տընաշէն.

Ո՞վ է ան՝ երկինք վերամբարձ հոգին՝
Երբ շըրճունքն՝ անխօս՝ բառեր կը հնչեն.
Ինք սըրտին տախտակ կը ծեծէ ուժգին.
— Տանտիկի՛նն է ան՝ բարի, տընաշէն. —

Ո՞վ է ան՝ որ երբ հոգեր՝ ցաւազին՝
Իր սիրտն անխընայ կ'ուտեն, կը մաշեն,
Ինք միշտ կը խորհի կեանքն իր զաւկին.
— Տանտիկի՛նն է ան՝ անձկոտ, տընաշէն, —

Ո՞վ է ան՝ որ հեւքն առած ըշտապի՝
Կը վազէ փոյթ հոն՝ ուր զինք կը կանչեն,
Ու ժիր՝ խոր քունէն ընդոստ կը սթափի.
— Տանտիկի՛նն է ան՝ զընձոտ, տընաշէն, —

Յաւ, սուգ որբան սուր խայթեր սըրտին տան,
Պիտի չընկըրկի ան՝ իր աշխուժէն,
Թեւերն անոր՝ շո՛ւքն ըլլան պիտի տան.
— Մայրիկն է ան հեզ, արի, տընաշէն.

Ա՛ն՝ ընտանիքին պահապանն հրեշտակ,
Պահէ պիտի մեզ սուգի մըշուշէն.
Տէրօջ վախն ու սէ՛ր՝ վառ միշտ կուրծքին տակ.
— Տանտիկի՛նն է ան, բարի, տընաշէն.

ՄԿՐՏԻՉ Ա. ԹՈՒՐԵԱՆ

ԲԱՐՈՅԱԿԱՆ ԵՒ ԳՈՐԾՆԱԿԱՆ՝ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ՊԱՋԻԿՆԵՐՈՒ ՎԱՐՓԱՐԱՆԻ ՄԷՋ

54.—Պննասիրութիւնն անստութեան դեմ

Պզտիկ աղջիկ, քեզ կը ճանչնամ առանց քեզ տեսներու և վստահաբար բան մը պիտի ըսեմ, որ ճշմարտութիւնն է:

Դու քիչ մը պճնասէր ես, ո՛հ, շատ քիչ, բայց արդէն շատ ես: Դու կը սիրես ժապաւենները, ժանեակի կտոր մը, գլխարկիդ վրայ ծաղիկ մը եւ եթէ երբեմն ուտելիքի և զարդարանքի մէջ քեզ ընտրութիւն ընել տան, վերջինը կ'ընտրես:

Եթէ այս միտումդ չուզէս, վերջը երբ ազատ ըլլաս ու քիչ մը դրամի տէր դառնաս, բոլոր տնտեսածդ զարդարանքի կը ծախսես: Եւ սակայն ի՞նչ է ժապաւեն մը, կերպաս մը, ծաղիկ մը: Ոչինչ մը, չնչին բան մը, սակաւատեւ բան մը, որ ամիս մը վերջ, շաբաթ մը վերջ, թեքեա վաղը պիտի թառամի, աւրուի, գունատի:

Այս ամէնը մէկ կողմ թող, պարզութեան լաւ սովորութիւնն առ, որ հասակդ առած ժամանակ վարժուած ըլլաս քիչով գոհ լինել զարդի համար, և մէկ կողմ դնել սնտոի բաներու տալիք ստակը նեղ օրերու համար:

55.—Ի հարկին վեհանձն ըլլանք

Աննայի ծնողքը սովորութիւն ունէին երբեմն երբեմն քանի մը մանր դրամներ տալ անոր: Աննա խնայող է, իր դրամը տուիի մէջ կը դնէ կը պահէ պէտքի համար: Մինչեւ հոս լաւ է այնպէս չէ՞:

Բայց Աննա վեհանձն չէ: Նա բնաւ քաջութիւն: Զուռի այն թանկագին տուփը բանալ և քանի մը դահեկան հանել մօրը համար ծաղկեփունջ մը կամ մեծ մօրը համար՝ որ եւ է բան գնելու կամ հեռաւոր բարեկամի յիշատակ մը զրկելու: Աննա խնայողութիւնը կը չափազանցէ: Պէտք և գիտնալ յարմար ժամանակին ծախսել, նոյն իսկ եթէ ողորմութիւն տալու համար ալ պէտք չըլլայ, կարելի է մեկուն հանոյք պատճառելու համար ծախսել, Պէտք չէ այնչափ հեռատես ըլլալ որ զրկենք ուրիշները գոհունակութիւն մ'ունենալէ որ կրնանք անոնց տալ քիչ մը վեհանձնութեամբ: Խելացի խնայողութիւնը պէտք չէ ազահուլութեան հասնի: Խելացի

խնայողութիւնը՝ խելացի վեհաճանութեան բոյրն է։ Թէ մէկին թէ միւսին համար անհոգ չըլլանք։

56.— Բախտի խաղ

Երբեմն կիները շատ խաղացող էին։ Տասնեօթը, տասնեութը դարերու մէջ հազուադէպ չէր տեսնել կիներ, որ իրենց ամբողջ հարստութիւնը թղթախաղով կորսնցուցած են։ Այսօր այս խաղաւորութիւնը կանանց մէջ պակսած է։

Սակայն պէտք է ասկէ զգուշանաք, որովհետեւ կրնայ կրկին շատնալ։ Ասոր համար պէտք չէ, որ չափազանցութեամբ բախտի այն փոքրիկ խաղերուն յարիւք, որոնք կը հաստատեն հասարակութեան տեղերու կամ տօնավաճառներու մէջ։ Զեզ կ'առաջարկեն շատ փոքր գումարով շահիլ փորձել։ Բայց վաստկելու համար շատ անգամ քիչ վճարել կուտան, տասը փարա, քսան փարա, երեսուն փարա, վերջապէս ամենափոքր առարկայի մը համար իր գնէն տասն անգամ ասելի կը վճարէք։

Երբեմն ալ, դրացիներու մէջ կ'առաջարկեն խաղի մը մասնակցիլ, մեծ բան մը չէ։ Միայն քանի մը բարայ, բայց խաղը կ'երկարի։ Կը կորսնցնես, կ'ուզես տուածդ ետ առնել և ահա կը տեսնես, որ դժուարութեամբ խնայուած ստակը կ'երթայ։ Զգուշացի՛ք բախտի խաղերէն, որոնց միշտ սկիզբը յանկուցիչ է և վերջը վտանգաւոր։

57.— Աւխասութիւնը կը վանէ ձանձոյթը

Հայր մ'ունէր ծոյլ աղջիկ մը։ Օր մը անոր ըսաւ «կը փափաքիմ քեզ հաճոյք պատճառել, այս վայրկեանէն սկսեալ այլևս գործ մը պիտի չընես», մատներդ պիտի մնան առանց բան մ'ընելու, որովհետեւ դու աշխատութիւնը չես սիրեր, եւ այսպէս անգործ պիտի մնաս օրջափ որ կամիս»։

—Ո՛հ, հայրիկ, շատ շնորհակալ եմ աղաղակեց ուրախութեամբ, վստահ եմ թէ այս միշտ պիտի տեսէ։

Հայրը ժպտեցաւ եւ բան մը չըսաւ։ Երկու օր վերջ, փոքրիկ աղջիկը կը խնդրէր հօրմէն, որ իրեն ձեռագործ մը, ասեղ մը և մատնոց մը տայ։

Այս բանը ձեզ կը զարմացնէ, այնպէս չէ՞։ Դուք ալ միեւնոյն փորձն ըրէք, միեւնոյն արդիւնքը պիտի ունենաք։ Որովհետեւ անգործութիւնն ու պարապութիւնը մեզի համար բնական չեն։ Զեռքերնիս ստեղծած են աշխատելու համար և մեր միտք աշխատելու

պէտք ունի չտկարանալու և չընդարմանալու համար: Այն փոքրիկ աղջիկն, որուն վրայ խօսեցայ, շուտով յոգնած էր շրջագայութեան երթալ գալէ, տան շանը հետ խաղալէ, կամ պատկերները նայելէ: Բնագղճմամբ աշխատանքի կը դառնար, որ զինք կ'զբօսցնէր ժամանակ անցնել կուտար: Աւստուրսիւն սիրել ձանձուրութեան դէմ ապահովելէ:

Տիկին, փ. ՀԱԶԱՐԱՊԵՏԵԱՆ

Բ Ա Ր Ո Յ Ա Վ Է Պ

Ն Ե Լ Լ Օ Ն

Ե Ի

Պ Ա Տ Բ Ա Յ Ը

Երբ Պատրաշը բոլորովին կազդուրուեց և ոյժը տեղը եկաւ, նոր տէրերը նոյնպէս սկսեցին նրան աշխատեցնել. բայց այժմ նրա մեծ և խելացի աչքեր արմանք էին արտայայտում, թէ ինչո՞ւ առաջուայ նման իրան ծեծով ու հաւհոյանքով չեն զարթեցնում, եւ նա այն օրից դէպի իւր նոր տէրերը զգաց ջերմ սէր, որ պահպանեց մինչեւ վերջը:

Պատրաշը երախտագէտ էր, ինչպէս և բոլոր շները: Նա պառկած տեղից իւր խելօք և բարի աչքերով դիտում էր իւր բարեկամների ամէն մի շարժումը:

Ամէն առաւօտ ծերունի Դաասը կով պահող գիւղացիների կաթը սայլակով տանում էր քաղաք ծախելու: Գիւղացիներն այս գործը յանձնում էին ծերունի Դաասին. նրանք գիտէին, որ նա ապրուստի ուրիշ միջոց չունի. բացի սրանից գիւղացիներն ուրախութեամբ նրան էին յանձնում իրանց կաթը, որովհետեւ գիտէին որ ծերունին ազնիւ ու արդար մարդ է. իսկ իրանք պարպում էին իրանց գործերով: Բայց այս աշխատանքը ծերունու համար հեռզհետէ ծանրանում էր: Գիւղից մինչեւ քաղաք մի վերստ կը լինէր. ութսուններեք տարեկան ծերունու համար դժուար էր բեռնաւորուած սայլակը այնքան ճանապարհ քաշել:

Պատրաշը ծաղկի հիւսկը պարանոցին՝ արեւի տակ պառկած դիտում էր, թէ ի՞նչպէս ծերունին տանում-բերում էր կաթնով կճուճները:

Մի առաւօտ դեռ ծերունին չէր մօտեցել սայլակին, որ Պատ-

րաչն արդէն կանգնած էր սայլակի առաջ, կարծես ուզում էր ցոյց տալ, թէ ինք պատրաստ է վաստակել այն հացը, որ իւր հիւանդ ժամանակ իբրեւ ողորմութիւն տալիս էին իրան։ Սկզբում Յովհաննէս Դաասը խղճում էր շանը, նա կարծում էր թէ անխիղճ բան է շունն այնպիսի ծանր գործի դնելը։

Բայց Պատրաշը յամառ էր. երբ տեսաւ որ իրան շեն ուզում լծել՝ նա փորձեց սայլակը իւր ատամներով քաշ տալ։ Այն ժամանակ ծերունին կատարեց իւր ազատած երախտագէտ շան ցանկութիւնը, և այս օրից սկսած միշտ շունն էր կաթը քաղաք տանում։

Քանի՜ քանի անգամ, ձմեռ ժամանակ, Յովհաննէս Դաասը օրհնում էր այն ժամը, երբ պատահեց ձորի մէջ շունչը փչող շանը։ Ինքը շատ ծեր էր և տարեցտարի ուժից ընկնում էր. ուստի նրան շատ դժուար կը լինէր ձիւնապատ և սառցապատ ճանապարհով քաշել սայլակը՝ եթէ այս ուժեղ և աշխատասէր ընկերը իրան չօգնէր։

Պատրաշը, այն սարսափելի կեանքից յետոյ, որ անց էր կացրել իւր նախկին տիրոջ մօտ՝ այժմ շատ գոհ եւ երջանիկ էր։ Նա առանձին ուրախութեամբ քաշ էր տալիս թեթեւ, բացկանանչագոյն սայլակը որ բարձած էր պղնձէ փայլուն ամաններով, իսկ իւր կողքից կաղալով գնում էր բարի ծերունին։

Ճաշից յետոյ ժամը երեքին կամ չորսին Պատրաշը իւր գործը վերջացնում էր եւ բոլորովին ազատ էր լինում։ Նա կարող էր արեւում ձգուած քնել, դաշտերում թափառել, խաղալ ու վազվզել նեյլօի կամ իւր ընկեր շների հետ։ Նա շատ երջանիկ էր։

Նրա նախկին տէր, մի ինչ-որ կռուի ժամանակ, տօնավաճառում սպանուել էր. այնպէս որ այժմ ոչ ոք չէր որոնում եւ անհանգիստ չէր անում Պատրաշին իւր նոր և սիրելի տանը։

Այսպէս անցաւ մի քանի տարի։

Յովհաննէս Դաասը, որ վաղուց անառողջ էր, բոլորովին թուլացաւ և կաթնած ստացաւ. ուստի այլ ևս չէր կարողում սայլակի հետ գնալ։ Այն ժամանակ փոքրիկ վեց տարեկան նեյլօն, որ լաւ ծանօթ էր քաղաքին և շատ անգամ ուղեկցել էր պապին՝ նրա տեղն անցաւ։ Այնուհետեւ նա էր տանում կաթը, փողերը ստանում եւ բաժանում տէրերին այնպիսի մի լրջութեամբ, որ ամենքը հիանում էին։

Փոքրիկ նեյլօն մի սիրուն տղայ էր՝ սեւորակ ու խելօք աչքերով, կարմիր թշերով, ոսկեգոյն երկար գանգուրներով, որոնք ծածկում էին նրա ուսերը։ Նկարիչները հիացած էին այս խմբակի վրայ. — կանաչ սայլակը՝ պղնձէ ամաններով, մեծ շիկագոյն

շունը՝ իւր գեղեցիկ սարքով, փոքրիկ տղան՝ փայտէ մեծ հողաթափներով. նկարիչները շատ անգամ կանգնեցնում էին նրանց և նկարագրում:

Նելլօն և Պատրաշը այնպէս լաւ և ուրախ էին կատարում իրանց գործը, որ երբ ամառն եկաւ՝ Յովհաննէս Դասար դարձեալ նրանց էր քաղաք ուղարկում: Իսկ ինքը իրա համար նստում էր դռանը, ննջում էր արեւում և հանգիստ արտով սպասում նրանց վերադարձին: Երբ նրանք տուն էին վերադառնում՝ իսկոյն արձակում էին Պատրաշի լուծը, և նա ուրախ հաջողով սկսում էր վազվզել, իսկ Նելլօն հպարտ-հպարտ պատմում էր իւր պապին օրուայ անցքերը: Այնուհետեւ բոլորը միասին ուրախ նստում էին ճաշի, որ լինում էր հաց ու կաթ, կամ ապուր: Երբ արեւը մայր էր մտնում՝ նրանք հանգիստ պառկում էին քնելու. իսկ ծերունին մեղմ աղօթք էր մրմնջում:

Այսպէս անցնում էին օրեր ու տարիներ. Նելլօն և Պատրաշը իրանց բախտաւոր էին զգում, մանաւանդ գարունն ու ամառը նրանք շատ ուրախ էին անց կացնում:

Նրանք սովորութիւն ունէին գործից յետոյ ջրանցքի ափին պառկել խոտի վրայ ու դիտել, թէ ինչպէս ծանր բեռնաւորուած նաւերը կամաց լողում էին նրանց մօտով և կարծես իրանց հետ բերում էին ծովային թարմ օդ:

Ձմեռը նրանց կեանքը աւելի ծանր էր լինում: Նրանք այն ցուրտ եղանակին պէտք է վեր կենային դեռ լոյսը չբացուած. շատ անգամ այնպէս շտապում էին, որ չէին կարողանում կուշտ ուտել: Գարդենն ու ամառը նրանց խրճիթը շատ գեղեցիկ էր, նա ամբողջովին ծածկուած էր կանաչ խաղողի որթերով: Իսկ ձմեռը այդ փոքրիկ խրճիթի ձեղքերից քամին ներս էր փչում և երբեմն էլ ջուրը ներս էր լցւում, յատակը ծածկում և սառնում էր:

Բայց նրանք չէին տրտնջում. մանուկը փայտէ ումանները հագին, շունն էլ իւր առողջ թաթերով, բոժոժների ուրախ ձայնի ուղեկցութեամբ՝ աշխուժով գնում էին սառցապատ դաշտով: Պատահում էր որ քաղաքում որ և է բարի կին տալիս էր նրանց կերակուր կամ մի կտոր հաց. երբեմն էլ առատաձեռն վաճառականներից մէկը մի քանի կտոր փայտ էր ձգում սայլակը կամ իրենց գիւղացի կանայքը մի մի անգամ փոքր ինչ կաթ էին տալիս, — ահա՛ այն ժամանակ նրանց ուրախութեանը չափ չէր լինում: Նրանք վազ էին տալիս ձիւնապատ դաշտերով և ուրախ ճչոցով տուն ընկնում:

Այսպէս նրանք բախտաւոր էին: Պատրաշն երբեմն ճանա-

պարհին պատահում էր չների, որոնք ծեծի ու հայհոյանքների ենթարկուած՝ գիշեր ցորեկ աշխատում էին անդադար, իսկ ներանցից մի քանիսը ցրտից ու քաղցից սատկում, վէր էին ընկնում փողոցներում, նրանց տեսնելիս՝ Պատրաշն իրան համարում էր։ ամենաերջանիկ արարածը աշխարհիս վրայ և ուրախութեամբ կատարում էր իւր պարտաւորութիւնը։

(Շարունակելի)

ԳՈՎԵՍՏ ԵՒ ՊԱՐՏԻՔ

Մեր ծնողներուն

Երբէք մի զլանաք ձեր տղայոց այն գովեստները որոց իրաւամբ արժանի են։ Տղայք թող գիտնան եւ զգան թէ՛ տղու մը համար մեծ արժանիք մըն է իր պարտաւորութիւնները կատարել եւ իր ծնողաց բացակայութեանը՝ ինչպէս եւ ներկայութեանը ճշդութեամբ կամաց հնազանդիլը, միայն հող տարէք որ ազնիւ հպարտութիւն մը զգան չէ թէ՛ այս կամ այն պարագայի մէջ իրենց պարտաւորութիւնը կատարած ըլլալուն համար՝ այլ յաջողելուն համար այն բանին մէջ որուն անկարող կը կարծէ մարդ, ասով իրենց արժանապատուութեան զգացումը անոնց համար պիտի ըլլայ յանձնառութիւն մը զայն պահելու։

Երբ տղայոց վրայ որ եւ է լաւ տրամադրութիւն մը տեսնենք վարժեցնենք զանոնք, զայն իրենց իբրեւ կարեւոր անդամ մը նկատել, ինչպէս իրենց աչքը, լեզուն կամ ոտքերը, զոր պարտինք գործածել, բայց առանց երբէք այնպէս նկատելու ամէն անգամ։

Եթէ ձեր աղջիկը բարեսիրտ է, եթէ կը ջանայ կամուռ ուրիշներուն հաճելի ըլլալ, եթէ տրամադիր է ինքզինքը մոռնալ ուրիշներուն համար, գոհունակութիւն յայտնեցէք իրեն, գովելով զինքը իբրեւ տէր բնական արժանեաց, յայտնեցէք իրեն թէ՛ բարի է, և մի զգացնէք իրեն թէ՛ ուրիշ կերպով կրնայ ըլլալ, ասով անկա երբեք գոռով չպիտի ըլլայ, այլ պիտի ջանայ զայն զգալ, անոր աւելի հաճելի պիտի ըլլայ միշտ գործին մէջ սիրել առաքինութիւնը, և բարութենէ թերանալու փորձութիւնը պիտի ներկայանայ իբրեւ անկարելի բան մը։

Եթէ փր տղան նշանաւոր իմացականութեան մը ձիրքը ունի, զգացուցէք զայն իրեն, յանդիմանելու համար զնա ի հարկին իր

դանդաղութեան եւ ծուլութեան համար, թո՛ղ անոր գործը միշտ իր մտաւորական կարողութեանցը համահաւասար լինին:

« Շատ ամօթալի բան է տղու մը համար՝ երբ իր կրցածը ընելու համար իր մտացիութիւնը ի գործ չդնէր »:

Այսպէս արժանիքի գիտակցութիւնը պիտի կազմէ անոնց մէջ պարտականութեան զգացումը, վասն զի ոչ ոք կարող պիտի ըլլայ զգալ բան մը առանց ճանչնալու թէ որու կը պարտի, և պարտականութեան զգացումը ճշմարիտ անդեղեայ է հպարտութեան:

Ատարազար

ՆԱԶԵՆԻԿ Պ. ՄԱՆՈՒԷԼԵԱՆ

ԼԵԶՈՒԻ ՈՒՍՈՒՅՈՒՄԸ

Աւելորդ է ծանրանալ այն կարեւորութեան վրայ զոր ունի այս ճիւղը նախակրթարաններու ուսմանց ծրագրին մէջ: Ուսուցիչներու պարտականութիւնն է խղճի մոռ չսովորեցնել զայն ո՛չ միայն տղոց մայրական բարբառը ըլլալուն համար, այլ որովհետեւ անիկա « Մայրն է միւս լեզուներուն », ինչպէս ըսած է գերմանացի մանկավարժ մը: Քանի՞նե՞ր կան որք չեն կրցած իւրացնել խօսելու եւ գրելու գոնէ միջակ կարողութիւն մը. ասոր պատճառը այն է որ նախնական վարժարաններու մէջ խնամք չէ տարուած անոնց մատղաշ գլխուն մէջ պէտք եղած ծանօթութիւնները տեղաւորելու: Չէ՞ որ մանուկներու յիշողութիւնը, միտքը պարզ մաքուր տետրակի մը կը նմանի, ուր առաջին անգամ գրուածները երբէք չեն աւրուիր առանց հետք մը թողլու:

Մայրենի լեզուի ուսուցումը երեք նպատակակէտ ունի, լաւ հասկնալ, լաւ խօսիլ եւ լաւ գրել: Ասոր համար հետեւեալ ճիւղերը կ'ուսումնասիրուին.

Ա. Քերականութիւնը. — Քերականութիւն մը օգտակար կրնայ ըլլալ, սակայն եւ այնպէս բերանացի ուսուցումը անկէ առաջ գալու է: Քերականական կանոնները վերջաւորութիւն մը. հետեւութիւն մը պէտք է ըլլան եւ ոչ թէ սկիզբ մը: Քերականութիւնը զանց ընելու է նախակրթարանաց ստորին կարգերուն մէջ, ուր ընթերցանութեան գիրքը առաջին տեղը կը բռնէ: Այս ճիւղին մէջ հիմնապէս եւ խնամքով ուսումնասիրելու արժանի կէտերը հետեւեալներն են. ընդհանուր կանոնները եւ լծողութիւնները: Մնացորդը կրնայ երկրորդական համարուիլ:

Բ. Վերլուծութիւն. — Վերլուծութիւնը նպատակ ունի նախադասութեանց կազմութիւնը եւ միանգամայն խօսքի մը մէջ

բառերուն ունեցած դերը սովորեցնել։ Այս ճիւղը մանկան դաստիարակման ու մտածելու եղանակը կը զարգացնէ. դպրոցին մէջ բարձր ձայնով եւ ուսուցչի հսկողութեան տակ պէտք է ըլլայ ան. որպէս զի տրուած բացատրութիւններէն ամբողջ աշակերտներն ալ օգտուին։ Վերլուծութիւնը ինքնին ձանձրացուցիչ ըլլալուն՝ ուսուցչին կ'իյնայ հետաքրքիր կտորներ ընտրել, որպէս զի տըղայոց ուշադրութիւնը — շատ անկայուն ինքնին — չի ցրուի։

Նախնական վարժարաններու մէջ ամէնէն աւելի քերականական վերլուծումին կարեւորութիւն տալու է քան թէ տրամաբանականին, որ վերացական ըլլալուն դիւրմըռնելի չէ։

Գ. Քերականական հրահանգներ. — Ասոնք հետզհետէ սովորուած կանոններն ի կիրարկանելու վարժութիւններ են. ինչպէս, ընթերցանութեան գրքին մէջ այսինչ տեսակ բառեր ստորագրածել, եզակիները յոգնակիի վերածել, հատուածի մը մէջէն անծականները և անոնց տեսակները որոշել, եւայլն... Յետոյ կարելի է քիչ շատ դժուար նախադասութիւններ շինել տալ, հոմանիշ եւ նոյնահնչիւն բառերը ուսումնասիրել, ինչպէս նաև դիւրին արմատները։

Դ. Ուղղագրութիւն. — Ուղղագրութիւն մը օգտակար արդիւնքներ տալու համար հետեւեալ պայմանները պէտք են.

1. Պարզ եւ մաքուր ոճ։

2. Աշակերտին զարգացման համապատասխանող նիւթ։

3. Բարձր եւ դիւրմըռնելի ձայնով արտասանութիւն։

Ուղղագրութիւնը դասարանին մէջ սրբագրել տալու է, նոյն իսկ աշակերտներու ձեռամբ՝ տետրակները իրարու հետ փոխելով։

Բոլոր խութին սխալները պէտք է գրատախակին վրայ բացատրուին։

Առօրեայ խօսակցութեան մէջ գործածուող նոր բառեր երբ հանդիպին, պէտք է յատուկ բառատետրի մը մէջ գրել տալ զանոնք։

Երկար եւ դժուարութիւններով լեցուն կտորները թողելու է։

Ե. Շարադրութիւն։ — Շարադրութեան նպատակն է ոճը կազմել։ Ամէն ոք ոճ մ'ունի, որով իր գաղափարները կը բացատրէ։ «Ոճը նոյն ինքն մարդն է» ըսած է Պիլֆոն։ Նախակրթարաններու մէջ ամէն բանէ առաջ մանկան սովորեցնելու է յստակ և ուղիղ գրել։ Մանուկներուն գաղափարները սահմանափակ ըլլալուն՝ շարադրութեան նիւթը նախապէս քննուած և բազմաթիւ բացատրութիւններով լուսաբանուած պէտք է ըլլայ։ Ի մի բան՝ աշակերտին մտածել և աղէկ մտածել սովորեցնելու է։

Ուրեմն տղան պէտք ունի ծրագրի մը, բլանի մը, որուն համաժամատ միայն պիտի կրնայ շարադրածել իր գաղափարները: Այս վերջիններու շրջանակը ընդլայնելու համար հետեւեալ միջոցները ձեռք առնելու է.

Ա. Փոքր պատմութիւններ ընել:

Բ. Դիւրահասկնալի ընթերցումներ կատարել տալ:

Գ. Շարադրութեան նիւթը նախ բերանացի պատմել տալ:

Դ. Իրագիտութեան դասերէն (Leçons de choses) հետաքրքիր նիւթեր քաղել:

Ե. Պտոյտներ ընել (անտառին մէջ, գոր օրինակ) եթէ այս վերջնոյն վրայ է շարադրութիւնը:

Պէլճիքաի մէջ փոփոխման (transmutation) եղանակը կը գործածեն, այսինքն թէ ոտանաւոր կտոր մը կուտան աշակերտին՝ զայն արձակի վերածելու համար: Այս միջոցը այնքան օգտակար սեպուած չէ, որովհետեւ տեսակ մը մեքենական աշխատութեան կը վարժեցնէ մանուկները, փոխանակ մղելու դասունք որ իրենք իրենցմէ գտնեն և կարգաւորեն բառերն ու նախադասութիւնները:

Ամերիկայի մէջ պատկերներու վրայ խորագրել կուտան շարադրութիւնները, մէթոտ մը որ միւսէն նախընտրելի է, որովհետեւ անիկա տղուն միտքը կը կանոնաւորէ, ստիպելով զայն որ իւրաքանչիւր առարկայ իր կարգին դասաւորուի և նկարագրուի:

ԱՐՄԷՆ ՅԱՐԶԱՏ

Վկայեալ Զուից• Մակավարժ. Դպրոցէն


ԳԻՏԱԿԱՆ ԷԶԵՐ

ՇՐՋԱՆԱԿԻՆ ՄԷՋ ՇՐՋԻԼ

(LOOPING THE LOOP)

Առտու մը Բարիզցիները արթննալով զարմանքով տեսան խոշոր ծանուցումներ, որոնք ահագին շրջանակ մը կը ներկայացընէին հեծելանւորդով մը, որ գլուխը վար կախուած՝ շրջանակին մէջը կը դառնար: Բարիզցիները՝ ամենափոքր նորութեան մը համար հոգի տուող մարդեր են, մանաւանդ որ ծանուցումներուն խոշոր գիրերով անգլիերէն վերտառութիւնը կը հետաքրքրէր զիրենք: Ուստի հասարակութիւնը խուժեց ներկայացումը տուող գազփնօն: Ահագին սրահին մէկ ծայրէն կը մեկնէր տախտակէ բաւական

լայն ճամբայ մը՝ գրեթէ ձեղունին մօտիկ բարձրութեամբ, քիչ մը յառաջանալով՝ ցից գաւիթափով մը վար կ'իջնար։ շրջանակ մը կը ձեւացնէր եւ նորէն կը բարձրանար։ Հեծանուորդ մը ամենայնեւ արագութիւնով մը կ'իջնար շեղ ճամբէն՝ շրջանակին մէջ կ'անցնէր՝ որու շրջանը կը կատարէր գլուխը վար կախուած՝ կեդրոնախոյս զօրութեան ոյժով անոր յենած ու դուրս ելլելով ճամբուն շարունակութեանը վրայ կանգ կ'առնէր։



Այս փորձին համար գործածուած հեծանիւը ծանր է, լեցուն քառջուէ անիւներով եւ առանց ոտնամուղի (pedales)։

Սիրերու այս խաղը վերակենդանացնողն եղած է Ամերիկացի մը, Պլէն. Բրէնքօթ՝ Արդէն 1845ին Հալլրի մէջ հաստատած չէին տեսակ մը երկաթուղի որ կատարեղապէս հիմակուան looping the loopն էր։ Մեկնակէտը 9 մէթր բարձր էր, եւ 32 մէթր ճամբով մը մինչեւ գետին հասնելով 4 մէթր տրամագծով շրջանակի մը

մէջ կը կազմէր, եւ ուրկէ դուրս տակաւին 18 մէթր կ'երկարէր, Առաջին անգամ փորձը երկաթեայ գծերու վրայ սահող բաց կառքով մը կատարեցին. մէջը դրած էին գաւաթով ջուր, պնակով հաւկիթներ, ծաղիկներ եւայլն, Շրջանակին մէջէն անցնելէն ետքը տեսան որ կաթիլ մը ջուր իսկ չէր թափած, հաւկիթները բնաւ չէին փնասուած եւ ծաղիկներէն եւ ո՛չ մէկ թերթ գետին ինկած էր: Պարզ գործաւոր մը սիրտ ըրաւ եւ կառքին մէջ նրստելով շրջանակին մէջէն անցաւ առանց ո՛ր և է անհանգստութիւն գգալու: Անմիջապէս շատեր իր օրինակին հետեւեցան:

1900ին, Միացեալ Նահանգաց մէջ՝ միեւնոյն սկզբունքին վրայ երկաթուղի մը շինեցին, բայց շատ աւելի մեծ չափի մը վրայ, կառքերը չորս երկաթեայ գիծերու վրայ են, որոնց երկուքը առնոց ուղղութիւնը կը պահեն, իսկ միւս երկուքը կառքերը կը բռնեն որ չիյնան նոյն իսկ եթէ շրջանակին գազաթը կանգ առնէ: Մէջը նստողները կաշիէ փոկերով կապուած են կառքին, թէև անօգուտ ըլլայ այս նախազգուշութիւնը:

Կեդրոնախոյս գօրութեան սկզբունքին վրայ հիմնուած է շատ աւելի վտանգաւոր ու յուզիչ փորձ մըն ալ: Տեսակ մը ընդարձակ 8—10 մէթր տրամագծով տաշտ մը, առանց յատակի, որու կողերը կազմուած են փայտէ տափակ ձողերէ՝ հաւասար հեռաւորութեամբ դրուած եւ շատ ամուր կերպով իրար կապուած: Այս տաշտը շարժուն ցիցերու վրայ բռնուած է օդին մէջ, Հեծանորդը խիստ ցից ձամբէ մը անցնելով կը մտնէ տաշտին մէջ, որու ուղղահայեաց դիրքով կողերուն վրայէն հազիւ թէ քսուելով կը դառնայ ու կը դառնայ, գրեթէ օդին մէջ՝ պարապութեան վրայ կախուած: Բանի մը վայրկեան վերջը տաշտը գետին կ'իջեցնեն կամայ մը եւ հեծելանւորդը կարող կ'ըլլայ դուրս ելլել շրջանակին մէջէն: Երբեմն երեք հեծանւորդներ, մի և նոյն ժամանակ նոյն տաշտին մէջ կը մտնեն, երբեմն ալ մէկ հեծանւորդին ուսերուն վրայ երկրորդ աճաբար մը նստած կ'ըլլայ:

Ինչպէս ըսինք, բոլոր այս փորձերը կեդրոնախոյս գօրութեան վրայ յենած են: Արդ, ի՞նչպէս կարելի է ապացուցանել կեդրոնախոյս գօրութիւնը: Պարսատիկի օրինակը ամենուն ծանօթ է: Ձեռքերնիդ գաւաթ մը լեցուն ջուր առէք եւ ամբողջ բազուկնիդ շարժելով օդին մէջ շրջանակ մը գծեցէք. պիտի տեսնէք որ կաթիլ մը իսկ ջուր չթափիր: Կեդրոնախոյս գօրութիւնն է որ մոլորակները (երկիրս, եւայլն) արեգակէն հեռու կը բռնէ եւ չթողուր անոր վրայ իյնան:

Հիմա խնդիրին մեքենական մասին անցնինք եւ թիւերով ցոյց տանք թէ ի՞նչ կ'անցնի վերի փորձերուն մէջ, Կրնանք ընդունիլ որ հեծանւորդը 65 քիլոկրամ կշռէ, իսկ մեքենան 25 քիլո, ընդամէնը 90 քիլոկրամ:

Երբ բարձր տեղէ մը մարմին մը թողունք, վար կ'իյնայ ան յարաճուն արագութիւնով մը, այսինքն իյնալու համար հարկ եղած ժամանակը քանի՜ շատնայ՝ մարմինին արագութիւնն ալ աւելորդ քառակուսիին չափ աւելի կ'ըլլայ. այսինքն՝ երբ առաջին երկվայրկեանին 9 մէթր 80 է՝ արագութիւնը, երկրորդ վայր-

կեանին չորս անգամ աւելի կ'ըլլայ, երրորդ վայրկեանին ինն անգամ աւելի, եւայլն: 9 մէթր 80 չափը որ հաշիւներուն մէջ կ'զրով կը ներկայացնեն՝ ծանուօթեան ձգողութիւնն է:

Այդ մարմինին զանգուածը հաւասար է իրեն ծանրութեանը՝ բաժանեալ կ'ով:

Արդ՝ փոխանակ մարմին մը բարձրէն վար ձգելու՝ անոր բոլորակի շարժում մը տանք, այսինքն չուանի մը ծայրէն կապելով դարձնենք, ի՞նչ տեղի պիտի ունենայ: Նոր ոյժ մը, կեդրոնախոյս զօրութիւնը, վայն պիտի ջանայ հեռացնել իր դարձած բոլորակին կեդրոնէն, եւ քանի մարմինը ծանր ու շարժումը արագ ըլլայ, ոյժն ալ այնքան աւելի կ'ըլլայ: Կեդրոնախոյս զօրութիւնը հաւասար է մարմինին զանգուածին՝ արագութեան քառակուսին հետ բազմապատկուելով տուած արտադրեալին՝ զոր կը բաժնենք գծուած շրջանակին շառաւիղով:

Այս հաշիւներուն մէջ պէտք չէ մոռնալ նաեւ օդին ընդդիմա-կալութիւնը, եւ մի՛ կարծէք թէ այդ արգելքը պզտիկ բան մըն է. ժամը 60 քիլոմէթր առնող հեծանորդ մը՝ 7¹/₂ քիլոկրամի ճընշում մը կ'զգայ դիմացէն:

Վերի փորձին մէջ ուրեմն՝ նշանակուած հաշիւները ընելով կը տեսնենք որ հեծանորդը՝ շրջանակին մէջ մտած պահուն ժամը 54 քիլոմէթրի արագութիւն մը ունի, եւ երբ կը հասնի գագաթը՝ ստացած կեդրոնախոյս զօրութիւնը 240 քիլոկրամի կը հաւասարի. քանի որ հեծանորդն ու մեքենան հազիւ 90 քիլոկրամ կը կշռեն, ըսել է որ հեծանիւր՝ շրջանակին պիտի փակչի:

Հակառակ այս թիւերուն պերճախօսութեան պէտք է խոստովանիլ որ սոյն փորձը կատարողը վերջին ծայր պաղարիւն ու ճարպիկ ըլլալու է, ինչու որ՝ ամենաջնջին անուշադրութիւն մը՝ հեծանիւր տախտակէ ճամբէն դուրս հանելով կրնայ հեծանորդին կեանքը արժել:

ԲՕԼ ՄՕՐԱՆ

Թարգմ. Զ. Ն. ՊԷՐՊԷՐԵԱՆ.

ԳԱՂԱՓԱՐՆԵՐ ԱՅԼ ԵՒ ԱՅԼ ԲԱՌԵՐՈՒ ՎՐԱՅ

Մուրացկան. — Մուրացկաններն իրենց վերքերով կ'ապրին. մարդիկ կան որ ամէն բանէ օգուտ կը քաղեն, նոյն իսկ արհա-մարհանքէն:

Մահ. — Մահը չյայտնէր բնաւ կեանքի գաղտնիքները. բոլոր մեր կեանքը մեր գերեզմանին շուրջը թափառելով կ'անցնէ. մեր զանազան հիւանդութիւնները շունչեր են որ զմեզ աւելի կամ նուազ կը մօտեցնեն նաւահանգստին: Մահը գեղեցիկ է, մեր բարեկամն է ան, սակայն չենք ճանչնար զինքը, ան կը ներկայա-նայ մեզ ծալտեալ եւ անոր դիմակն զմեզ կը զարհուրեցնէ:

ՎԵՐՅՈՒԹՈՒՄՆԵՐ

Pour Հ. Մանթ

Տղու հոգւոյս ամբողջ ուժովն, բերկրունի
Կէք վայրիկ մը սիրեցի ես, քեզ, աւա՛ղ,
Դուն իմ հոգւոյս էիր միակ դիցունի
Դեզի կեանքս զոհ կուսայի ես մասալ:

Մէկ ժպիտդ, մէկ նայուածքդ հրաւառ
Զայնրդ անոյժ, քո մէկ բառդ սիրագին,
Կը վանէին արեւ, վե՛սերը իսպառ
Նրանուրեմբ արբեցնելով իմ հոգին:

Բայց ալ մեր մէջ վերջացած է ամեն բան
Ինձի համար ալ մեռած էս իսպառ դուն...
Դե՛ւ է եղբւր անիկա զոր մանկական
Սիրոյս մէջ էս կը կարծէի զուարթուն:

Պատճառեցաւ շուշան յանջրդ սպիտակ,
Տեսայ ետին քո սիրտդ սեւ սաղանի,
— Լոկ չարութեան սեւ անդունդ մը անյասակ,
Զոր կը ծածկէր քո մարմինըդ գեղանի:

Ա՛խ, շատ ու շատ կը ցաւիմ ես, քեզ նման
Մէկու մը սիրտ նըւիրելու խօլաբար,
Շատ կը ցաւիմ ես սիրով մը անսահման,
Նրկար ասեմ քեզ սիրելուս վայրապար:

Զի տեսայ որ ժպիտներովն որք արթա,
Պարզեւէին ուրախութիւն մը աննառ,
Ուրիշներուն ալ, դուժա՛ն, կը ժպտա,
Իմ առջեւ իսկ անհոգ, անփոյթ, անպատկառ:

Նկու պատճենք ամբողջ սիրոյ վիպակնիս,
Ալ մոռցիր զիս... միայն երբ որ մէկը քեզ,
Ընէ ինչ որ ինձի բրիւ, նազելիս,
Ո՛հ այն ասեմ յիշէ սերքս բոցակէզ:

ԳՐԻԳՈՐ ԹՈՐՈՍԵԱՆ

Գում-գարու

(Բ. Լ.Ռ.)

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ

ԴԵՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ ԶԱՆԱԶԱՆ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐՈՒ ՄԷՅ

Բողոքականութեան դերը. — Մարդկային զարգացման և քաղաքակրթութեան պատմութեանը մէջ անուրանալի է թէ բարեկարգութեան շարժումները մեծ տեղեր կը բռնեն. և թէ անոնց հերոսները՝ դարերու հազուաժին զաւակներն են: Բողոքականութիւնը՝ փրկութիւնն էր մտքին դարաւոր կաշկանդումին, ու այս օրհնաբեր ու լուսաբեր փրկումը մեծ և նպաստաւոր դեր խաղաց կրթական մթնոլորտին մէջ ալ. անանկ որ, ինչպէս Փրանսացի հեղինակ մը, Գարբիէլ Գամբէյն կ'ըսէ, երեք դարէ յետէ Բողոքականութիւնը նախակրթարաններու վարչութեան օրինակելի կարապետն եղած է քաղաքակիրթ աշխարհին: Բարեկարգութեան յաջորդող տարիներուն մէջ բացուած դպրոցները, Լուտերի, Գոմէնիւսի եւ ուրիշ նմաններու կը պարտինք: Ասոնք ժողովրդային նախակրթարաններ բանալով կրթութիւնը ընդհանրացուցին, կը բռնական ու գիտական գաղափարներուն արմատօրէն ու հատու փոփոխումներուն հետ կրթութեան նպատակներն ու եղանակներն ալ բարեշրջեցին: Ասոնք կրօնական հեղինակներու անմեղձեանալի դիրքերը ջնջեցին, ինչպէս Պագօնեան փորձառական փիլիսոփայութիւնը ջախջախեց գիտական հեղինակները: Եւ սոյն տարբեր տեսակէտներու վրայ գտնուողներ ձեռք ձեռքի տուած՝ կրթական աշխարհին մէջ մտան ու կարծիքները, հաւատքները, գիտութիւնները, անհատական դիտողութեան, դատողութեան եւ փորձառութեան սեղաններուն վրայ թափեցին:

Ասոնք ներշնչեցին համայնքին թէ մէն մի տնհատ իր փրկութեան պատասխանատուն ինքն է, ու այս ներշունչ մղեց ժողովուրդը որ անձամբ պրպտէ, կարգայ եւ իր մեղքերու փրկութեան ճամբան գտնէ: Ընթերցանութեան սոյն փափաք՝ ամէն գիւղի և քաղքի մէջ նախակրթարաններ հաստատեց, ուսուցիչներ ստեղծեց, թոշակագին վճարել սորվեցուց:

Ասոնք գաղափարեցին մտքերը թէ՛ տգիտութիւնը՝ ներկայ և հանդերձեալ, նիւթական եւ բարոյական չարիքներու ու կորուստներու միակ պատճառն է: Այս ըմբռնումներ կամաց կամաց խրթանեցին մարդերն ու տղաքները որ դպրոցի սեմէն ներս մտնեն եւ ուսանին: Գոմէնիւսը (1) ջանալով որ կրթութիւնը իր ժաման-

(1) Գոմէնիւսը (1592 - 1671) Գերմանիոյ Մորավիա քաղրին մէջ ծնած համբաւաւոր դաստիարակ-գրող և երէց մ'էր:

նակին եւ իւրաքանչիւր շրջավայրին, պայմաններուն ու վիճակներուն յարմարցնէ, ստեղծեց դպրոցներու աստիճանական դասաւորումը որ ներկայ կրթական դրութիւնները կըստուերագծէ: Հեղինակ մը այս մարդը, այժմէութիւն ունեցող դաստիարակութեան Գալիլէոսն ու Պադօնը կ'անուանէ: Իրաւամբ իր կրթիչ ջանքերը՝ զինքը արդի մանկարժութեան իրր առաջին աւետարանիչ կը ցուցադրեն, երկրորդական ամուր տալով Բեսթալօզիի⁽¹⁾: Գոմէնիւը՝ երեք աստիճանի բաժնեց տղուն տարիքին նայելով. 6—12, 12—18, 18—24 տարեկան աշակերտներ իրենց աստիճանին յատուկ դպրոցներէն անցնելով պիտի լրացնէին ուսման թացքը: Կը պնդէր թէ ամէն աստիճան դպրոցներուն մէջ, բարձրագոյն դասերու նախատարերքը աւանդելու է: Մինչեւ իսկ մայրեր մինչեւ վեցերորդ տարիքին մէջ կրնան մանկան սորվեցնել Բերականութեան, Աշխարհագրութեան, Թուաբանութեան, Պատմութեան, Բնագիտութեան տարրական նիւթերը: Դպրոցական դասերու ծրագրին վրայ տարուէ տարի փոխան նոր դասեր աւելցընելու, առաջին տարիէն սկսեալ բոլոր աւանդելի ուսումներուն ծանօթացնելով աշակերտը քայլ առ քայլ, շրջանէ շրջան ընդլայնելու է մինչեւ վերջ: Ինչ որ այս մարդ քարոզեց երկուք ու կէս դար առաջ, պէտք է ըսել թէ այս օրուան բոլոր նշանաւոր դաստիարակներն ու մանկավարժներ ընդունած են: Գերմանացի, Ֆրանսացի, Անգլիացի և Ամերիկացի կրթուած ընտանիքի մը 10 տարեկան մանուկը աւելի շատ բան գիտէ գիտական աշխարհէն, քան մեր մինչ իսկ բարձրագոյն վարժարաններու 20 տարեկան աշակերտները: Ըսեմ անցողակի թէ մեր դպրոցները այն ատեն արմատական փոփոխութեամբ մը պիտի զարգանան երբ սոյն մեթոտը ներարկուի: Գոմէնիւը կը թելադրէր որ բոլոր կրթական շէնքերը՝ քաղքի ժխորէն ու աղմուկէն հեռու առանձնավայրերու վրայ հաստատուին, սա պատճառաբանութեամբ թէ՝ ուսանողին ուշը գրաւող որ եւ է ձայն կամ երեւոյթ անոր խորհողական կազմածքը խանգարելով միտքը կը փթացնեն: Մեռած դասագիրքերէն աւելի բնութեան կենդանի մատենանը գործածել կը պատուիրէր: Առարկայական ու փորձառական ուսուցումի ջիւղ պաշտպան էր: Քերականական կանոններ աւանդելէ առաջ խօսիլ, կարդալ եւ գրել կը սորվեցնէր:

Մ. Ս. ՈՐԲԵՐԵԱՆ

(1) Բեսթալօզիի նկատմամբ յաջորդ յօդուածներուս մէջ:

ՇՈԳԵՊԻՆԴ ՄԵՆԱՄԱՐՏ ՄԸ

(Շարունակութիւն 18րդի թիւէն)

Գ.

Գինետունէն մեկնած ժամանակնիս թոմարնի վրայ ոտքի կենալու կարողութիւնն իսկ չէր մնացեր . սակայն պատուական մարդուկը բնաւ չէր մոռցեր ըրած կարգադրութիւննիս : Մինչդեռ ես , գինովութենէս սթափելով ալ բաւ մը չէի յիշեր , և որոշուած օրը ելայ դէպի դաշտերը պտոյտի գացի :

Թոմարն , խօստովին հաւածայն , մեկնած էր Ուաշինկընէ , մինչեւ ճաթուն երեք քառորդը՝ շատ զարմացեր էր չաճապարելու համար , բայց երբ կայարան մտեր էր առանց ինծի հանդիպելու , նեղսրտութիւնը բարկութեան փոխուեր էր . այդ պահուն ես ալ պտոյտէս ետ կը դառնայի . թոմարն ինծի տեսնելով քովս եկաւ եւ ուսիս զարնելով ծանր ձայնով մը ըսաւ .

— Բեզի կը փնտռէի տղաս , ըսելու համար թէ երկաթուղիի ընկերութեան պատիւ չես բերեր Ես թօմ թոմսնն եմ , եւ դու այս առտու լոքոմոթիվիդ վրայ՝ նիւ եորքէ մեկնելու էիր :

— Իրաւ է , թօմ , շատ իրաւունք ունիս . հաւատա՛ որ մոռցեր էի , այնչափ խմցուցիր որ՝ քառասունըութը ժամ անդադար քնանալէս ետքը հիմա է որ արթնցայ և պզտիկ պտոյտ մը ընել գացի : Եթէ կ'ուզես վաղը սկսինք :

— Լա՛ւ , տղաս , վաղը նորէն կ'սկսինք :

Եւ իրարմէ բաժնուեցանք : Յաջորդ օրը մեքենաս պատրաստեցի , իբր թէ սովորականէ դուրս պաշտօն մը ունէի կատարելիք , կայարանին չնկոցին մէջ մէկը շնչմարեց մեկնիլս : Թոմարն ալ դեռ Ուաշինկըն չհասած ետ դարձեր էր ժամը 10ին ատենները : Դժուարին կէտը՝ երկուքնուս ալ միեւնոյն գծին վրայ գայն էր . բարեբաղդաբար ճամբուս երկու երրորդին վրայ ծանօթ աքժանող մը կար . շուտով մը համոզեցի անիկա եւ կրցայ մտնել այն գծին վրայ՝ ուր թոմարնի վայրաշարժը կը յառաջանար չոգեպինդ : Սուտ խօսած պիտի ըլլամ եթէ ըսեմ որ այս նոր ճամբան անցած ատենս սիրտս սովորականէն ուժով չէր զարներ : Շատ չկարենալ մտածելու համար սկսայ մեքենայիս ընթացքը արագացնել : Անանկ շուտ կ'երթայի որ վայրաշարժս ամէն վայրկեան գիծէն դուրս կրնար ելլել , եւ շիտակը խօսելով իմ ուզածս ալ ատկէ զատ ուրիշ բան մը չէր :

Կեանքիս մէջ երկու անգամ վայրաշարժներու իրար բաղխիլը տեսած էի , և գիտէի թէ ինչ սոսկալի քաոս մը յառաջ կուգայ : Մեքենավարներուն համար ըսելիք չկայ . հրաշք մը միայն կրնայ զանոնք ազատել , հրաշք մը որ վիպագիրներուն երեւակայութեան մէջ իսկ գոյութիւն չունի : Այս յիշատակը կ'արթննար մտքիս մէջ եւ չէի կրնար զայն վանել : Հնոցին մէջ նորէն ածուխ լեցուցի և երբ գլուխս վեր առի՝ թոմարնի վայրաշարժը հագիւ թէ

մղոն մը հեռու էր ինէ :

Ամէն բան ըսե՞մ ձեզի : Աչքերս գոցեցի և ածուխի պաշարին տալով կռնակս սպասեցի : Վայրկեան մը ետքը հովի պէս բան մը զգացի, ձախ կողմն շուտափոյթ աղմուկ մը առի... և...

Զարմանալի բան, միշտ յառաջ կը քալէի. մեքենաներնիս իրարու չէին զարնուած : Ապշած՝ աչքերս բացի, դիմացս բան մը չկար. վայրաշարժին ետեւը նայեցայ. թոմսըն չոգեպինդ կը հեռանա՞ր. — Այս գործին մէջ սատանին մատը ըլլալու էր անշուշտ, ապա թէ ոչ թօմի ծանր մեքենան ինչպէս իմինիս վրայէն անցաւ առանց փոքր մնաս մը տալու : Ի սրտէ գոհ էի քիչ մը դէպքերուն այս ընթացքը առնելէն, ուստի կանգ առի և սկսայ դէպի ետ դառնալ հանդարտօրէն : Թոմսըն ալ նոյպէս ետ դարձած էր, սակայն միեւնոյն գծին վրայ չէր գտնուեր : Երբ իրարու քով եկանք՝ հանելուկը պարզուեցաւ : Միամիտ ու շատ ալ պաղարիւն (չիտակը խօսելով) աքծանող մը տեսնելով որ երկու վայրաշարժներ արտասովոր արագութեամբ մը իրարու դէմ կը յառաջանան, աքծանին վրայ վազեր և կըցածին չափ կոխեր էր, որով թոմսըն ստիպուեր էր հակառակ իր կամքին, ուրիշ գիծի մը վրայ անցնիլ :

— Այգ ապուշը, ըսաւ թոմ, գործերնուս արգելք եղաւ, նորէն սկսելու է :

Դ.

Թոմ թոմսըն ամենայամառ մէկը ըլլալու համբաւը կը վայելէր. այս գործին մէջ ցուցուց թէ ատոր արժանի է : Յաջորդ օրը տունս եկաւ և հազար չքմեղանքներ ընելով՝ հայհոյանքներու ընտրեալ հաւաքածոյ մը ուղղեց ապիրատ աքծանողին, որու արթնամտութեան շնորհիւ՝ թոմ ու ես տակաւին ողջ էինք : Եթէ չգիտնայի որ ընթերցողներս եւ ընթերցողուհիներս այդ գէշ խօսքերը չուտով մտքերնին կը պահեն ու կը գործածեն, գուցէ մէկ քանին ըսէի, բայց... : Թոմսըն բաւական ժամանակ շարունակելէ և իր կոծիծին հազարումէկ շարժումներ տալէ ետքը՝ ձեռքը ինծի երկնցուց :

— Տղա՛ս, ըսաւ, վաղը չէ միւս օրուան նմաց գործը :

— Շատ լաւ, ատանկ թող ըլլայ, թոմ :

— Բայց այս անգամ պէտք է որ յաջողինք, ետքը դուն ալ ես ալ ծաղու առարկայ կը դառնանք :

— Աստուած չընէ, թոմ, պիտի յաջողինք :

Երկու օր վերջը նորէն ճամբայ ելայ առջի օրուան պէս :

Օգը շատ գեղեցիկ էր : Չեմ գիտեր թէ մթնոլորտի վիճակէն էր այդ օրը վախ մը չզգալս. քանի կը յառաջանայի այնքան միտքս կը պայծառանար և փափաք մը կ'ունենայի ասանկ աղուր օդի մը մեռնելու : Կըցածիս չափ ածուխ կը լեցնէի հնոցը եւ մեքենաս կ'արագցնէի՝ որպէս ղի թօմը ջախջախեմ, մինչդեռ թօմ ալ իր կողմէ նոյնը կ'ընէր անշուշտ : Քառասունըութր մղոն ճամբայ առած էի երբ ստիպուեցայ հնազանդիլ նշանի մը որ

կանգնեալները կը հրամայէ: Ճամբուն վրայ արկած մը պատահած էր: Իմ նպատակս թո՛ւի վայրաշարժին վարնուելով անիկա՝ և մի եւնոյն ժամանակ ինքզինքս ջախջախել էր, և ոչ թէ գծէն դուրս ելած վակոններու և կոտրտած ճամբորդներու խառնուրդի մը վրայ իյնալ: Ուստի մեքենաս կամացցուցի և արկածեալ կառախումբէն քսանըհինգ եարտա հեռուն կանգ առի: Սոսկալի կոյտ մը դիզուած էր կառքերու, վայրաշարժի, ամէն տեսակ ապրանքներու՝ չաքար, մեղր, գինիի տակառ, ուխքի ընդունարաններ, եւլն. կառախումբը բնաւ ճամբորդ չէր պարունակեր, իսկ մեքենավարն ու հնոցպանը մէջտեղ չկային. այդ պաշտօնեաները ասանկ արկածներէ ետ չեն դառնար: Կարճ հոգոց մը ըսի մտքէս այդ թշուառներուն համար. եւ կր պատրաստուէի ճամբան մաքրելու համար իմ կրցած օգնութիւնս տալու, երբ մէկը նշմարեցի որ վազելով դէպի մեզի կուգար: Արկածեալ կառախումբին մեքենավարն էր. անպիտանը՝ մեքենան մէկէն ի մէկ կանգ առնելուն՝ օդը նետուէր եւ քիչ մը անդին գտնուող ճահիճի մը մէջ ինկեր եր կռնակի վրայ. շնորհիւ այս հրաշքին՝ աղտոտ ջուրի լոգանք մը առնելով՝ ազատած էր:

Պահ մը ետքը հնոցպանն ալ երեւցաւ ուրախ ու զուարթ, եւ երբ մօտ հասաւ անուշ հոտ մը կը բուրէր: Աս ալ պատմեց թէ՝ օդը նետուելով՝ երբ գետինը իննալով մեռնելու կ'սպասէր, զգաց թէ անասի մը կախօրրանի վրայ կ'իյնայ, եւ վարդի տունկերը ցանց կազմելով՝ անոր անկումը մեղմացուցին:

Հազիւ թէ հնոցպանը պատմութիւնը աւարտած եր, կառախումբերու բեկորներուն մէջէն նոր աղմուկ մը լսուեցաւ:

— Ատ ի՞նչ է նորէն, գոչեցին ամէն կողմէ:

— Ո՞վ է ատիկա, ըսէ՛ք, թշուառականներ, ոռնաց թօմ թօմսնի ձայնը: Շուտ մը քովը վազեցի. գէշ աղէկ ինքզինքը ազատեց եւ առդին եկանք. բնաւ վնաս մը չէր կրած, կոծիծն ալ իր տեղն էր:

— Նորէն չյաջողեցանք, աղա՛ւ, կրկին սկսելու է: Կը տեսնե՞ս, իմ գաղափարս գործնական չէիր գտներ, մինչդեռ քուկդ ալ գործադրութեան կողմէ շատ մը դժուարութիւններ կը յարուցանէ:

Այս պարագան բնաւ խորհած չէինք: Թօմսն, կայծակի պէս վազելով՝ անկիւն մը դառնալուն, այս կառախումբին վրայ ինկեր ու խորտակեր էր:

— Ինչ եւ է, ըսի, բաղդաւոր էիք, ազատեցաք:

— Այդպէ՛ս կը կարծես, Ուիլեամ, գաւազ, վրաս մի՛ խընդար, ահա, երկու օր կորսնցուցինք, առանց կոտրտած վայրաշարժը ի հաշիւ առնելու. բայց յաջորդ անգամ աւելի յարմար տեղ մը քեզի պիտի սպասեմ: Պլաք Ռսվերի կամուրջին վրայ:

— Ըսել է միտքերնիդ դրած էք ինծի սպաննել:

— Ե՛ս, երբէք: Բայց քանի որ ասանկ որոշեցինք... կը կարծե՞ս թէ իր նախանշե՞մ:



— Ձէ՛, թօմ, այդ ըսել չէի ուզեր:

— Լա՛ւ, գալ երեքշաբթի կը անսնուինք ուրեմն:

Մնացեալը յաջորդ թիւով

Թարգմ. ԶԱՐԵՀ Ն. ՊԵՐՊԵՐԵԱՆ

Ազգու գեղ մը մազերը բուսցնելու համար



Քանի մը տեղերէ, ուր գործակալ չունինք, Հանրագիտակի բաժանորդագրողները կան ուղղակի Խմբագրութեանս գիմելով և քիչ օրէն վճարելու խոստումով: Միմիայն իրենց խոստման վստահելով մինչեւ այսօր թերթերը ղրկեցինք իրենց հասցէին: Տարեշրջանի չորրորդ ամիսը բոլորելու վրայ ըլլալով կը խնդրենք այս Մեծ. Բաժանորդներէն որ իրենց խոստումը կատարելու ժամանակը եկած համարին եւ մեզի ստիպել չտան թերթին առաքումը դադարեցնելու հարկին մէջ գտնուիլ:

ԽՄԲԱԳՐԱՊԵՏ—ԱՐՏՕՆԱՏԵՐ
ԱՐՄԵՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

ՏՊԱԳՐԻԶ—ՀՐԱՏԱՐԱԿԻԶ
Կ.ՇԱ.Ն. Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ.

Պապը Ալի ճատտէսի, Թիւ 33, Իգտամ լրագրին դէմ

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ՇԱԲԱԹԱԿԱՆ

ԱՌԱՋԵՈՐԴ ՎԱՃԱՌԱԿԱՆԱՑ

Նոր տարիէն սկսեալ Հանրագիտակի կը հրատարակուի շաբաթական 20-24 էջէ բաղկացեալ եւ ամէն ամսոյ մէջ մէկ թիւը պիտի յատկացուի Առաջնորդ վանառականացի, 24 էջ:

Վեցամսեայ ու եռամսեայ բաժանորդագրութիւն չընդունուիր:

Տ Ա Ր Ե Կ Ա Ն Գ Ի Ն Ն Է

Պոլսոյ Համար

30 շրուշ

Գաւառաց »

35 »

Արտասահման

45 »

Հատը

30 փարայ

Առաջնորդ վանառականացի 12 ցեսրը զան առնել ուզողը պէտք է վճարէ 12 դրու:

ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ ԳՈՐԾԱԿԱԼԻՔ

Ամասիա, Հայկազուն էֆ. Խանդամուր
Ասաբազար, Աշոտ էֆ. Պաղպաղեան
Ասանա, Յակոբ էֆ. Տ. Պողոսեան
Դօնեա, Տիգրան էֆ. Յ. Տիւլկերեան
Եւթոկիա, Խաչիկ էֆ. Գ. Թաշճեան
Ներզնկա, Պարոյր էֆ. Արզուման
Զմիւռնիա, Կարապետ էֆ. Մալէճանեան
Էրզրում, Տիգրան էֆ. Բրուտեան
Էրպա՛ա, Կարապետ էֆ. Դօճանեան
Թեքրեալ, Ասատուր էֆ. Արսէնեան
Խարբերդ, Կ. էֆ. Մ. Յովսէփեան
Կեսարիա, Երուանդ էֆ. Երկաթեան
Կիւրիւն, Դրիգոր Մ. էֆ. Խանդամուր
Հալեպ, Ս. էֆ. Ամատեան
Հիւսէյնիկ, Կ. էֆ. Մ. Յովսէփեան
Մալաթիա, Դրիգոր էֆ. Թաշճեան
Մարաշ, Արթ. Տ. Նէրսէս ԲՆ. Շաշինեան
Մարզուան, Ա. էֆ. Կ. Կիւլպէնկեան
Նիկոմիդիա, Յակոբ էֆ. Տ. Ազարեան
Պարսիզակ, Ստեփան էֆ. Մակարեան
Սամսոն, Յովհաննէս էֆ. Նիքսարեան
Սրվազ, Մանուկ էֆ. Պէլլերեան
Սիւմաքի Բեօյ Ա. էֆ. Կ. Կիւլպէնկեան
Վեզիր Բեօրբիւ » » »
Տիարպեփր, Լեոն էֆ. Սրապեան
Օրսու, Յովհաննէս էֆ. Հէքիմեան

Քանի մը տեղերէ, ուր Գործակալ չունինք, կը հարցնեն թէ Հանրագիտակի բաժնեդիւնը և կամ մանր յանձնարարութիւններու փոխարժէքը ի՞նչպէս ղրկելու է:

— Ամէնէն պարզ միջոցն է Օսմ. նամակագրոջմ դնել նամակին մէջ եւ նամակն ալ ասպահովագրել (քահիւս ընել): Նամակագրոջմ կրող նամակները ասպահովագրելը անհրաժեշտ է, որովհետեւ մեր ձեռքը հասած ժամանակ, երբէք պատասխանատու չենք: